The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

BRITISH COUNCIL

ICHD
ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ
International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

Կրթություն և միգրացիա. մարտահրավեր և հնարավորություն

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Գիտելիքների հարստացման տենչով պայմանավորված բնակավայրի փոփոխությունը միգրացիա ծնող պատճառների խճապատկերում քիչ ուսումնասիրվածներից է: Ինչպես միգրացիայի ցանկացած տարատեսակի, այնպես էլ կրթության նպատակով կատարվող տեղափոխությունների ոլորտի ուսումնասիրությունները պետք է սկսել հետևյալ հարցերի պարզաբանումից՝ քո երկիրը միգրացիոն հոսքի տեսանկյունից հանդիսանում է հանգրվանի՞, թե՞ ելման նշանակետ, թե՞ մեկը և մյուսը միաժամանակ. Ինչպիսի՞ն է վիճակագրությունը, ի՞նչ խնդիրներ կան և ի՞նչ նպատակներ պետք է հետապնդել:

Կրթությունը էմիգրացիայի խթանի՞չ

Թեև ստույգ վիճակագրություն գոյություն չունի, թե հայաստանցի «ուսանող միգրանտների» որ մասն է վերադառնում հայրենիք, որ մասը մնում արտերկրում և փորձում աշխատանք գտնել, այնուամենայնիվ տարբեր հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ մնացողների թիվը բավականին մեծ է: Սակայն ավելի մտահոգիչ է այն հանգամանքը, որ նույնիսկ այն մասը, որը վերադառնում է հայրենիք, առաջին իսկ հնարավորության դեպքում պարտաստ է լքել այն: Եվ պատճառը թերևս միայն հրապուրիչ աշխատավարձն ու բարեկեցիկ կյանքի հասանելիությունը չեն: «Ուղեղների արտահոսքի» պատճառները բազմազան են, օրինակ՝ պետությունը, որ հարկատուների միջոցներով տարեկան հազարավոր մասնագետների է կրթում, այնուհետև չի էլ փորձում հրապուրել նրանց դեպի պետական համակարգ, կամ գոնե հստակ արտահայտել, որ ունի նրանց պահանջը: Մյուս կողմից էլ արտասահմանի լավագույն բուհերում որակյալ կրթություն ստացած կամ հենց սեփական երկրում ճանապարհ անցած ու փորձառու մասնագետի համար պետական ծառայությունը հաճախ նշանակում է նոր ու ոչ միշտ ընդունելի, երբեմն էլ՝ վանող, փոխհարաբերություններ ու արժեքներ: Անձի ստացած կրթությունը, հմտություններն ու ունեցած փորձը չէ, որ որոշում է նրա զբաղեցրած դիրքը պետական աստիճանավանդակում: Չշարունակենք, պարզապես ամփոփելով փաստենք, որ սոցիալական արդարության պակասն էլ իր հերթին դառնում է հայրենիքից մեկնելու որոշման պատճառ:

Գործե՞լ, թե...

Բավարարվել միայն որոշակի կրթական բարեփոխումներով, երբ բարելավումներն ուշանում են այլ ոլորտներում, կնշանակի առանց այն էլ սուղ ռեսուրսների փոշիացում: Ի դեպ, ռեսուրսների սղությունն ինքնին երբեմն նույնիսկ հիմնական խոչընդոտը չէ խնդիրների լուծման ճանապարհին: Որոշ փորձագետների հավաստմամբ, 2003թ. ի վեր կրթությանը հատկացված բյուջեն աճել է մոտավորապես երեք անգամ: Մինչդեռ մանրադիտակով զինված անգամ դժվար է որևէ որակական փոփոխություն գտնել կրթական տարբեր մակարդակներում: Ավելին, այսօր թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածները հաճախ դժգոհում են համապատասխան մասնագետների և միջազգային ասպարեզում հարաբերվելու համար անհրաժեշտ հմտությունների բացակայությունից: Մինչդեռ այսօր Հայաստանում առկա են մի շարք հնարավորություններ այդ բացը լրացնելու համար, օրինակ՝ տարբեր կրթական փոխանակման ծրագրերը: Հանրության այն հատվածը, որը թվում է թե պետք է սպառեր այս հնարավորությունները, նույնիսկ պատրաստ չէ եղած ռեսուրսներն իրացնելու: Մեկ այլ օրինակ. Հայաստանում անընդհատ շահարկվում են Բոլոնյան գործընթացի մասին խոսակցությունները. եվրոպական չափանիշներ, որակի ապահովում, կրեդիտային համակարգ և այլն: Սակայն իրականում այդ արժեքների կրողներ, այդ ռազմավարութ-

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

յունն իրականացնողներ երկրում գրեթե չկան: Արդյունքը՝ ռեսուրսների ոչ նպատակաուղղված վատնում:

Պետության դերը

Այսպիսով, միգրացիոն հոսքերի մեր խճապատկերում պետության դերակատարումը շատ հստակ է.

- մի դեպքում.
  - երկրում ստեղծել մրցունակ դաշտ կրթությունն ու գիտությունը զարգացնելու նպատակով, որը հնարավորություն կընձեռի համապատասխան հաստատություններին ապահովել անհրաժեշտ գիտական և կրթական որակ.
  - դիվանագիտական աշխատանքներում շեշտը դնել Հայաստանը՝ որպես որակյալ ուսում առաջարկող երկրի կերպարի ստեղծման վրա.
- մյուս դեպքում.
  - հստակորեն սահմանել պետական և հասարակական պահանջարկը. ա/ ներկայացնել այն մասնագիտությունների ցանկը, որոնց անհրաժեշտությունը հրատապ է երկրի տնտեսության զարգացման համար և բ/ գնահատել ներքին ռեսուրսները՝ ձևավորված պահանջարկի բավարարման տեսանկյունից, արդյունքում որոշել կրթական միջազգային շուկայից ձեռքբերվելիք ծառայությունների ծավալները.
  - հստակեցնել այսպես կոչված հայաստանցի «ուսանող միգրանտների» նկատմամբ վարվող քաղաքականությունը, որն, ըստ էության, բոլորովին էլ բարդ խնդիր չէ: Մի քանի կոնկրետ և հստակ մեխանիզմների կիրառումը կարող է հանգեցնել նույնիսկ կարճաժամկետ արդյունքների: Մասնավորապես, պետք է ստեղծել արտերկրում ուսանողների տվյալների ընդգրկուն բազա. ով, որտեղ, ինչ մասնագիտություն և ինչ հիմունքներով է սովորում, ինչպիսի կենցաղային պայմաններում է բնակվում: Դիվանագիտական ներկայացուցչություններին տալ ուսանողների հետ աշխատանքներ տանելու գործառույթներ՝ նրանց համար կազմակերպել զանազան միջոցառումներ, օժանդակել այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ դասագրքերի համար վճարված գումարների և կացարանների վարձի փոխհատուցումը և այլն: Վերջապես, ստեղծել թափանցիկ մի պատուհան, որտեղից արտասահմանյան բուհերի շրջանավարտները կարող են մանրամասն տեղեկություններ ստանալ հայաստանյան աշխատանքային շուկայում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Ես սիրում եմ իմ հայրենիքը

Իրականում անհրաժեշտ է քաղաքականությունների համադրում:

Խնդրի հանգուցալուծման համար ոմանք առաջարկում են պետության կողմից հստակ մոդելի կիրառում. պետությունն ինքն է դառնում իրեն անհրաժեշտ մասնագետների պատվիրատուն և ապահովում նրանց կրթությունն ու աշխատանքը: Սա հրատապ և կարճաժամկետ միջամտություն է: Առավել հիմնարար արդյունքների հասնելու համար առաջարկվում է այդ միջամտությանը զուգահեռ խորացնել բոլոր մակարդակներում հնչող բանաձևով՝ *«Ես սիրում եմ իմ հայրենիքը»*, որը քարոզչական լոզունգից պետք է վերածվի գործունեությամբ ամրագրված արժեքի:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագրի շրջանակներում 2008թ-ի մարտի 25-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: